ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 27.06.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2019/71

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝ «ՌԵՆԱ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ

Հ. Օհանյանի (լիազորագիր, տրված՝ 05.06.2019թ.)

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 29.05.2019թ. թիվ 26/26-1/8887-2019 գրությամբ «ՌԵՆԱ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը՝ պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ ոստիկանության (հետայսու նաև՝ Պատվիրատու) 24.05.2019թ. թիվ 01.3/11/13067-19 գրության պատճենի հիման վրա, 29.05.2019թ. թիվ 26/26-1/8887-2019 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «ՌԵՆԱ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝

Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «ՌԵՆԱ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«ՌԵՆԱ» ՍՊԸ-ն 05.06.2019թ. Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

ՀՀ ոստիկանությունն Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգը սկսել է ՀՀ ՊԵԿ ՏՏ վարչության կողմից տրված պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվության հիման վրա, ըստ որի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով «ՌԵՆԱ» ՍՊԸ-ն ունեցել է ժամկետանց պարտավորություններ 11 000 ՀՀ դրամ:

Սակայն հարկային մարմնի կողմից 13.05.2019թ. տրված թիվ 1304 տեղեկանքից երևում է, որ վերը նշված 11 000 դրամ ժամկետանց պարտավությունը վերաբերվում է դրոշմանիշային վճարին: Այդ պարտավորությունը առաջացել է 20.09.2018թ.-ից և թյուրիմացաբար շարունակվել է մնալ մինչև 10.05.2019թ. դրա վճարում կատարվելը: Իսկ մինչ այդ վճարումը չի կատարվել միայն այն պատճառով, որ հարկային մարմնի էլեկտրոնային համակարգի հարկային պարտավորությունների ցանկում դրոշմանիշային հարկը չի արտացոլվում և այդ պարտքը մնացել է աննկատ:

Տրված նույն տեղեկանքով երևում է, որ Ընկերությունը տվյալ ժամանակահատվածում միասնական հաշվում ունեցել է գերավճար 716 615 ՀՀ դրամի չափով:

Ընկերությունը ստեղծման օրվանից՝ 1997թ. պարտաճանաչ կերպով, ժամանակին կատարել է հարկային պարտավորությունների վճարումները և միշտ բոլոր պարտավորությունների գծով ունեցել է գերավճարներ:

Ընկերությունը հանդիսանում է իրանական «ԻՐԱՆ ԽՈԴՐՈ» ավտոարտադրող ընկերության միակ պաշտոնական ներկայացուցիչը Հայաստանում, Երևանում ունի ավտոսրահ, ավտովերանորոգման կայան՝ որակյալ մասնագետներով, ավտոպահեստամասերի լայն տեսականի՝ ՍԱՄԱՆԴ, ՍՈՐԵՆ, ՌՈՒՆԱ, ՊԵԺՈ ՊԱՐՍ

ավտոմեքենաների համար, որոնք շահագործվում են ՀՀ ոստիկանության տարբեր ստորաբաժանումներում: Ընկերությունը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվելու դեպքում կզրկվի նշված ավտոմեքենաների՝ որակով և էժան սպասարկում կատարելուց:

Ընկերությունը խնդրել է հաշվի առնելով վերոգրյալը, չներառել «ՌԵՆԱ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/71 ընթացակարգի շրջանակներում 06.06.2019թ. ժամը 10:45-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է, վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. <u>ՀՀ ոստիկանության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ ոստիկանությունը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 24.05.2019թ. թիվ 01.3/11/13067-19 գրությամբ ներկայացրել է «ՌԵՆԱ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/71 ընթացակարգի շրջանակներում 06.06.2019թ. ժամը 10:45-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2019/71 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2019/71 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Պատվիրատուի կողմից ՀՀ ոստիկանության կարիքների համար կազմակերպվել է «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-ՊԱՀԵՍՏԱՄԱՍ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով 08.05.2019թ. հայտ է ներկայացրել «ՌԵՆԱ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 08.05.2019թ. ժամը 10:30-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշմամբ՝ մի շարք չափաբաժինների մասով «ՌԵՆԱ» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

3. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 16.05.2019թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***«ՌԵՆԱ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի 11 000 ՀՀ դրամի չափով ժամկետանց պարտավորություն:***

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.04.2019թ. ժամը 11:30-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «ՌԵՆԱ» ՍՊԸ-ն հայտարարվել է որպես չընտրված մասնակից:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 29.05.2019թ. թիվ 26/26-1/8887-2019 գրությունը, ՀՀ ոստիկանության 24.05.2019թ. թիվ 01.3/11/13067-19 գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

«ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ դրոշմանիշային վճարը զինծառայողների կյանքին և առողջությանը պատճառված վնասների հատուցումն ապահովելու նպատակով սույն օրենքով սահմանված կարգով և չափով ՀՀ պետական բյուջե վճարվող պարտադիր վճար է, որի վճարման պարտականությունը կատարվում է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանում սույն օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված չափով դրոշմանիշ գնելու միջոցով:

«Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտները՝ ՀՀ պետական և համայնքների բյուջեներ վճարվող հարկերի, տուրքերի և օրենքով սահմանված վճարների, դրանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով հաշվարկվող տույժերի և տուգանքների ամբողջությունն է, որոնց հաշվառումը, հաշվառման և (կամ) վճարման նկատմամբ հսկողությունը, մուտքերի ապահովման վերահսկողությունն օրենսդրությամբ վերապահված է հարկային մարմնին:

«ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասի ժե) պարբերության համաձայն՝ հարկային եկամուտներն են՝ դրոշմանիշային վճարները:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման

համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Սույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում սույն կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը:

ՀՀ ոստիկանության կողմից կազմակերպված «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-ՊԱՀԵՍՏԱՄԱՍ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի մասնակից «ՌԵՆԱ» ՍՊԸ-ն 08.05.2019թ. հայտ է ներկայացրել և Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 08.05.2019թ. ժամը 10:30-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշմամբ՝ մի շարք չափաբաժինների մասով վերջինս ճանաչվել է որպես առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 16.05.2019թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***«ՌԵՆԱ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի <u>11 000</u> ՀՀ դրամի չափով ժամկետանց պարտավորություն:***

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.04.2019թ. ժամը 11:30-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «ՌԵՆԱ» ՍՊԸ-ն հայտարարվել է որպես չընտրված մասնակից:

Այսպիսով՝ «Ընկերությունը «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-ՊԱՀԵՍՏԱՄԱՍ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի մասնակցության հայտի թիվ 2 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է Ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին, մինչդեռ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված եզրակացության համաձայն՝ Ընկերության հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորության չափը գերազանցել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ մասով նախատեսված գնային առաջարկի մեկ տոկոսի շեմը:

Արձանագրում եմ, որ Ընկերությունը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացրել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 06.06.2019թ. թիվ 1485 տեղեկանքը, որով հայտնել է, որ ՀՀ ՊԵԿ տեղեկատվական բազայում առկա տվյալների համաձայն՝ «ՌԵՆԱ» ՍՊԸ-ի դրոշմանիշային վճարի մասով պարտավորությունը 01.11.2018թ. դրությամբ կազմել է ***<u>11 000</u>*** ՀՀ դրամ:

Միևնույն ժամանակ արձանագրում եմ, որ ՀՀ պետական եկամուտների կոմիտեն 10.05.2019թ. թիվ 3-4/17950-2019 գրությամբ հայտնել է, որ ՊԵԿ «Հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգի» «Հարկային պարտավորություններ» բաժնում 2018թ. նոյեմբեր ամսից տեղադրված է հետևյալ հաղորդագրությունը՝

«Սույն քաղվածքում դրոշմանիշային վճարների գծով պարտավորությունների կամ սահմանված չափից ավել վճարված գումարների վերաբերյալ տեղեկությունները

արտացոլված չեն: Նշված տեղեկությունները ստանալու համար անհրաժեշտ է դիմել սպասարկման բաժին»:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերության մոտ 11 000 ՀՀ դրամի չափով դրոշմանիշային վճարի գծով ժամկետանց պարտավորությունը, համաձայն ՀՀ պետական եկամուտների կոմիտեի վերոհիշյալ գրության առաջացել է 01.11.2018թ. դրությամբ, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 10.05.2019թ. թիվ 3-4/17950-2019 գրությունը, *գտնում եմ, որ մինչև 01.11.2018թ. ընկած ժամանակահատվածն Ընկերությունը առաջնորդվել է հարկային մարմնի տեղեկատվական բազայում առկա անձնական հաշվի քարտում արտացոլված տեղեկատվությամբ՝ իրազեկված չլինելով 11 000 ՀՀ դրամի չափով դրոշմանիշային վճարի մասով առկա պարտավորության վերաբերյալ:*

Այսպիսով, Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Նման պայմաններում, հաշվի առնելով Ընկերության վարքագիծը, արձանագրում եմ, որ «ՌԵՆԱ» ՍՊԸ-ն «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-ՊԱՀԵՍՏԱՄԱՍ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում թույլ չի տվել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պարտավորության խախտում, ուստի գտնում եմ, որ Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 29.05.2019թ. թիվ 26/26-1/8887-2019 գրությամբ «ՌԵՆԱ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու

իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**